ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է դրամաշնորհի հատկացման մրցույթի հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման հավելվածի 23-րդ կետի համաձայն

Մրցույթի ծածկագիրը ԵՔ-ԴՄ-ՈՖ-01/24

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդների (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդների) իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում» միջոցառման իրականացման նպատակով կազմակերպված ԵՔ-ԴՄ-ՈՖ-01/24 ծածկագրով դրամաշնորհի հատկացման մրցույթի հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառը և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ N1 –	տեխնիկական վրիպակ
Փոփոխության նկարագրություն՝	«հանձնաժողովի քարտուղար Վերոնիկա Խորասանյանին» բառերը փոխարինվել են «հանձնաժողովի քարտուղար Նարինե Հովհաննիսյանին» բառերով, հայտարարության տեքստի *ՄԱՍ I 1.1 ենթակետից* հեռացվել է *«որի շրջանակում կարող է կնքվել մինչև երկու պայմանագիր»* ձևակերպումը, քանի որ սույն մրցույթով չի նախատեսվում մեկից ավել պայմանագրերի կնքում: Մրցույթով նախատեսվում է մեկ հաղթող, հետևաբար, հոգնակիակերտ ձևակերպումները խմբագրվել են եզակի թվով: «ԵՔ-ԴՄ-ՈՖ-01/24» ծածկագրով դրամաշնորհային մրցույթի հրավերի Հավելված 2-ով ներկայացված ֆինանսական նախահաշվի աղյուսակը՝ «Ընդամենը Դ» տողից հետո լրացվել է «ԱԱՀ» տողով: Սույն փոփոխություններով պայմանավորված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը երկարաձգվել «2023թ.-ի դեկտեմբերի 15, ժամը՝ 16:00»-ի փոխարեն սահմանվելով՝ «2023թ.-ի դեկտեմբերի 20-ը, ժամը՝ 16:00»-ն:
Փոփոխության հիմնավորում՝	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման հավելվածի 20-րդ կետի 8-րդ և 15-րդ ենթակետեր

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ԵՔ-ԴՄ-ՈՖ-01/24 ծածկագրով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթի հանձնաժողովի քարտուղար Նարինե Հովհաննիսյանին:

Հեռախոս՝ +374 10 599 641

Էլեկտրոնային փոստ՝ narine.hovhannisyan@escs.am

ԵՔ-ԴՄ-ՈՖ-01/24 ծածկագրով դրամաշնորհի հատկացման մրցույթի հանձնաժողով